

Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 93 ԵՎ 94 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 93 որոշման 1-ին կետում «նշանակության» բառից հետո լրացնել «հողամասեր» բառը:

Որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետում նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը չի համապատասխանում օգտագործման տրամադրման նպատակին: Հավելվածի մեջ հողամասի նպատակային նշանակությունը գրառված է բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ այլ հողերի: Բացի այդ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են միայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից:

Համայնքի ավագանու թիվ 94 որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետում նշված համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության 0,25575 հեկտար մակերեսով հողամասը առանց դրա օտարման նպատակը նշելու (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ) և հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու նախատեսվել է օտարել աճուրդով:

Որոշումը չի համապատասխանում ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներին, համաձայն որոնց տեղական ինքնակառավարման մարմինները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում և հաստատում են համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը, քաղաքաշինական գոտիավորման նախագիծն ու հողերի օգտագործման սխեման, ինչպես նաև սահմանում և փոփոխում են հողերի նպատակային և գործառնական նշանակությունը՝ կառավարության սահմանած կարգով:

Որոշումը չի համապատասխանում նաև ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ կետի ա) ենթակետի պահանջներին, համաձայն որոնց պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումը իրականացվում է բացառապես հողերի օգտագործման սխեմաներով, բնակավայրերի գլխավոր հատակագծերով, մանրամասն հատակագծման նախագծերով, գոտևորման նախագծերով, դրանց բացակայության դեպքում՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներով նախատեսված նպատակներով օգտագործելու համար:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է որոշման մեջ նշել համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերի օտարման նպատակը, ինչպես նաև փոփոխել գործառնական նշանակությունը:

Որոշման հավելվածի 8-րդ և 11-րդ կետերով նախատեսված աճուրդով օտարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի մակերեսները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 23¹-րդ կետի պահանջին, համաձայն որի գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի դեպքում մեկ լոտով օտարվող հողամասի առավելագույն չափը չի կարող 20 հեկտարից ավելի լինել, իսկ նվազագույն

չափը չի կարող պակաս լինել տվյալ համայնքում սեփականաշնորհված հողաբաժնի չափից, եթե համայնքի հողերի օգտագործման սխեմայով այլ չափ նախատեսված չէ:

18.02.2020թ.